Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլի
2025-2026 ուս. տարի
/տևողությունը – 120 րոպե/
11-12 – րդ դասարան

1. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՝ սխալ 2միավոր

ա. ՀՀ ապրանքների առևտուրը գերազանցում է ծառայությունների առևտրին:

բ. Վերջին հնգամյակում ապրանքների առևտուրն ավելի շատ է աճել Հայաստանում, քան ծառայությունների առևտուրը:

գ. Մեծածախ առևտուրը Հայաստանում գերազանցում է մանրածախ առևտրին:

դ. Վերջին հնգամյակում մեծածախ առևտուրն ավելի շատ է աճել Հայաստանում, քան մանրածախ առևտուրը:

ե. Ծառայությունների առևտուրն աշխարհում գերազանցում է ապրանքների առևտրին:

զ. Ծառայությունների առևտրի աճի տեմպը զիջում է ապրանքների առևտրի աճի տեմպին:

է. Ապրանքների արտահանման ծավալների աճի տեմպն ավելի մեծ է զարգացող երկրներում:

ը. Ապրանքների առևտրում հանքային հումքն ու գյուղատնտեսական ապրանքները գերակշռող են:

2. Ի՞նչ են նշանակում եզրույթներից յուրաքանչյուրը 1միավոր

ա. գրաբեն բ. բեռնալարվածություն

3. Բնութագրով որոշել երևույթը 1միավոր

Այս համամոլորակային երևույթն առաջանում է մթնոլորտի աղտոտվածության արդյունքում: Այն առաջին հերթին դրսևորվում է արևային ճառագայթման քանակի նվազման և արդյունքում միջին ջերմաստիճանի անկման տեսքով:

4. Ինչպե՞ս են կոչվում.

ա. Ձեռնարկությունը, որն իր արտադրական և առևտրային գործունեությունը իրականացնում է տարբեր երկրներում մասնաճյուղերի կամ դուստր ձեռնարկությունների ցանցի միջոցով: 1միավոր

բ. Տաք ու չոր քամի, որը լեռան լանջերով վար սուրելիս առաջացնում է ջերմաստիճանների կտրուկ բարձրացում և որի հետևանքով ՀՀ որոշ տարածքներում ձնհալը կտրուկ մեծացնում է գետերի վարարման ռիսկը: 1միավոր

5. Խնդիրներ

ա. 60000կմ^2 մակերեսով տարածքի գոլորշունակությունը 500մմ է, գետերով ջրի ներհոսքը 2մլրդ մ^3, արտահոսքը՝ 1,5մլրդ մ^3, իսկ թափվող տեղումների քանակը՝ 550մմ: Հաշվի առնելով, որ տվյալ տարածքի ջրապահանջը 8մլրդ մ^3 է՝ քանի՞ տոկոսով է այդ ջրապահանջը բավարարվում: 1միավոր

բ. Օգտվելով բերված աղյուսակի տվյալներից՝ որոշեք ա) ի՞նչ կլիմայի տիպ է գերակշռում տվյալ տեղանքում (0.5միավոր); բ) ո՞ր կիսագնդում է տվյալ տեղանքը (0.5միավոր) 1միավոր

Ցուցանիշ	Ամիսներ											
	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Միջին ջերմաստիճան (^{0}C)	28.4	28.2	28.3	28.5	27.2	25.4	25.0	25.9	27.9	29.2	29.4	29.1
Միջին տեղումներ (մմ)	432	372	311	102	20	2	1	5	17	70	147	256

6. Ելնելով կցված թերթիկի բարձրաչափական տվյալներից՝ վերակառուցեք տարածքի ռելիեֆը և գունային սանդղակով պատկերեք այն՝ նշելով նաև ստացված հորիզոնականները (2միավոր): Պատասխանեք հարցերին:

ա. Հորիզոնի ո՞ր կողմնադրության լանջն է ավելի զառիթափ: 0.5միավոր

բ. Որքա՞ն է տվյալ պատկերում հորիզոնականի կտրվածքը 0.5միավոր

7. Դասավորել ՀՀ գետերն ըստ դրանց ջրհավաք ավազանում քաղաքների թվի աճող հաջորդականության՝ Հրազդան, Ողջի, Արփա, Դեբեդ (ներառյալ Փամբակ և Ձորագետ)

1միավոր

8. Բացատրել

ա. 21-րդ դարի երեք խոշորագույն աղետներից էին 2004թ.-ի Հնդկական օվկիանոսի ցունամին (մոտ 230հզ. զոհ), 2010թ.-ի՝ Հայիթիի երկրաշարժը (ավելի քան 220հզ. զոհ) և 2011թ.-ի Տոհոկուի երկրաշարժը (ավելի քան 18 հզ. զոհ)։ Այդ տարիներին բնական աղետների գնահատված տնտեսական կորուստները կազմել են՝ 2004թ.-մոտ 134մլրդ $, 2010թ.-մոտ 127մլրդ $, 2011թ.- մոտ 371մլրդ $: Ինչո՞վ է պայմանավորված տնտեսական կորուստների նման անհամաչափությունը՝ համեմատած մարդկային կորուստներին։ 1 միավոր

բ. Չնայած Առևտրի համաշխարհային կազմակերպության գործադրած ջանքերին և ՄԱԿ սահմանած աղքատության նվազեցման թիրախին՝ աշխարհում գնալով մեծանում է առևտրի ազատականացման դեմ խոչընդոտների կիրառումը։ Ինչու՞ 1միավոր

9. Դիտարկեք միտումը և պատասխանեք հարցերին



(**a**) (**b**) (**c**)

ա. Տվյալ բնակավայրի ո՞ր հատվածում է գտնվում լճակը (նշել հորիզոնի կողմը) (0.5միավոր)

բ. Ո՞րն է միջին ջերմաստիճանների ընդհանուր աճի գլխավոր պատճառը (0.5միավոր)

գ. Քաղաքային միկրոկլիմային վերաբերող ո՞ր երևույթն է ուժգնացել այդ փոփոխությունների արդյունքում (0.5միավոր)

դ. Օրվա ո՞ր ժամանակահատվածում է (գիշե՞ր, թե ցերեկ) այդ երևույթի դրսևորմամբ ջերմաստիճանների տարբերությունը հարակից տարածքների նկատմամբ առավել մեծ (0.5միավոր)

10. Պատասխանեք հարցերին՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումները

ա. Չնայած ամենաշատ զբոսաշրջիկ ընդունող երկրների շարքում ԱՄՆ զիջում է Եվրոպական մի շարք երկրների, սակայն զբոսաշրջությունից գեներացվող գումարներով առաջատարն է։ Ինչու՞։

1միավոր

բ. Չնայած օրգանական գյուղատնտեսության մի շարք ակնհայտ առավելություններին՝ այն չի դիտարկվում որպես պարենային հիմնախնդրի լուծման արդյունավետ տարբերակ։ Ինչու՞

1միավոր

11. Համապատասխանեցնել կենսատարողության և էկոլոգիական հետքի տվյալները երկրներին (օր.՝ Ա-1) 2միավոր





Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ասատրյան


N
0 0.25 0.5 1 կմ
2300
2300
2300
2300
2300
2200
2200
2300
2100
2100
2300
2300
2200
2200
2300
2300
2100
2400
2400
2500
2200
2400
2500
2400
2500
2300
2500
2400
2100
2500
2300
2500
2400
2300
2200
2400
2200
2300
2300
2100
2200
2200
2000
2100
2100
2000
2000
2100
2100
2100
2100
2100